ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«06» 03 2026 թ.
№ ՊՄՏ2/470

Արմտեքստիլ ՍՊԸ /ՀՎՀՀ 00498117/ տնօրենին
ՀՀք.Երևան, Արցախ թ, տ 56
էլ. փոստի հասցե՝ armtextile77@gmail.com
Հեռ.՝ 010-444-334

ՀՀ պաշտպանության նախարարության և Արմտեքստիլ ՍՊԸ միջև 28.11.2025թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-25-8/34-2 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում ընկերությունը պետք է մատակարարեր 30 հատ «Չհրկիզվող պահարաններ/ /Պահարան չհրկիզվող/» մինչև 10.12.2025թ: 2026թ. հունվարի 19-ին ընկերությունը մատակարարել է 30 հատ «Չհրկիզվող պահարաններ/ /Պահարան չհրկիզվող/», որոնք չեն ընդունվել Պայմանագրի տեխնիկական բնութագրի պայմաններին չհամապատասխանելու պատճառով:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա»(մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում) և «բ» (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են) ենթակետերը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 06.03.2026թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ Արմտեքստիլ ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 36000 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն) և 50400 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն) որը հաշվարկված է մինչև 10.02.2026թ. ներառյալ: Ինչպես նաև Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 360000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 540000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե մինչև 2026թ. մարտի 16-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 360000 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 540000 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա Արմտեքստիլ ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2026թ. մարտի 16-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2075 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարները Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Հարգանքով՝

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ